**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-20/5 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք. Հրազդան 13 հուլիսի 2020թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ Վ. Բաղյան
Մ. Ղարիբյան

Հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյան

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Ա. Հարությունյան )**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
3. Ընթացակարգի գնային առաջարկների մասին
4. Հայտերի մերժման մասին
5. Անհամապատասխանությունների շտկման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**2.Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները բացման մասին**
**(Ա. Հարությունյան )**

Մասնակիցների կողմից ծրարները կազմվել ու ներկայացվել են Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան **բացառությամբ Լիլիթ-92 ՍՊԸ-ի ներկայացված հայտի, որում բացակայում են Հրավերով սահմանված ծավալաթերթ- նախահաշիվը և լիցենզիան:**

Մյուս մասնակիցների հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են, սակայն կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

1. ***Մուրադյան Շին ՍՊԸ***-ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 1 չափաբաժնի /«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչանոցի նորգման աշխատանքներ / վերջին բաժնի՝ էլեկտրամատակարարման մոնտաժային աշխատանքներ բաժնի կշռի և հրավերով սահմանված նույն բաժնի կշռի միջև առկա է շեղում:

   2-րդ չափաբաժնի /«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի դահլիճի նորոգման աշխատանքներ / 1, 3, 4 բաժինների կշիռների և հրավերով սահմանված նույն բաժնի կշռի միջև կան շեղումներ:

**Սահմանված ժամկետում շտկեք նաև երկու չափաբաժինների բոլոր կշիռները՝ համապատասխանեցնելով Ձեր գնային առաջարկին:**

Դիմում հայտարարության մեջ թերի է գրված չափաբաժինների համարները:

2. ***Մանուկյան Շին ՍՊԸ***-ի կողմից ներկայացված 1 չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշվի բոլոր բաժիններում առկա են թվաբանական սխալներ: Մասնավորապես՝ 1 չափաբաժնի 1 բաժնի բոլոր տողերում, երկրորդ բաժնի առաջին տողում, 3-րդ բաժնի 1,3,4,5-րդ տողերում, և վերջին բաժնի 1, 3, 8, 9 տողերում: Առաջին չափաբաժնի վերջին բաժնի 5-րդ տողում մասնակցի կողմից փոխված է հրավերով սահմանված աշխատանքների կատարման ծավալը՝ հրավերով սահմանված է 5, իսկ մասնակցի կողմից ներկայացված հայտում նշված է 2:

ProTender©
www.protender.am

Թվաբանական սխալների պատճառով սխալ է ստացվել նաև վերջնարդյունքը և 1,3, 4 բաժինների կշիռները:
Նույն խնդիրը առկա է նաև 2-րդ չափաբաժնի պարագայում և բոլոր բաժիններում առկա են թվաբանական սխալներ; Մասնավորապես 1 բաժնի 1,3,4,5,6,8 տողերում, 2-րդ բաժնի բոլոր տողերում, 3-րդ բաժնի 1-5 և 7-9 տողերում, 4-րդ բաժնի 6,7,8,9 տողերում: Վերջին բաժնի 4-րդ տողում հրավերով սահմանված աշխատանքների ծավալը 4-ի փոխարեն գրված է 115: Խնդրում եմ սահմանված ժամկետում շտկեք թվաբանական սխալները, և Ձեր գնային առաջարկին համապատասխան դրանց կշիռները:

3. ***Դողսե ՍՊԸ***-ի կողմից ներկայացված հայտում և 1 և 2 չափաբաժինների բոլոր բաժիններում առկա են թվաբանական սխալներ՝ մասնավորապես 1 չափաբաժնի 2-րդ բաժնի 1 կետում: Սխալ են նշված նաև բոլոր բաժինների կշիռները, որը պետք է համապատասխանի մասնակցի գնային առաջարկին:

2-րդ չափաբաժնի 1 բաժնի ընդհանուր գումարը սխալ է նշված, 3-րդ բաժնի 3,4-րդ տողերում առկա են թվաբանական սխալներ:

Սխալ են նշված նաև 1-3 բաժինների կշիռները, որը պետք է համապատասխանի մասնակցի գնային առաջարկին:
Դիմում հայտարարության մեջ թերի է գրված չափաբաժինների համարները:

4. ***Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ-ի*** ներկայացված հայտում 1 չափաբաժնի 1 տողում առկա է թվաբանական սխալ: Սահմանված չեն նաև 1 չափաբաժնի բոլոր բաժինների կշիռները:

Առկա է 2-րդ չափաբաժնի վերջին բաժնի առաջին տողի թվաբանական սխալ; Երկրորդ չափաբաժնի համար ևս կշիռներ սահմանված չեն:

5. Մուրադյան Շին ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1 չափաբաժնի գնային առաջարկում առաջարկված ընդհանուր գինը՝ տառերով գրված, չի համապատասխանում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում նշված ոչ տառերով ոչ թվերով նշված հանրագումարին: Հանձնաժողովը որոշեց մերժել Մուրադյան Շին ՍՊԸ-ի 1 չափաբաժնով ներկայացրած գնային առաջարկը :

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

## 3.Ընթացակարգի գնային առաջարկների մասին

**(Ա. Հարությունյան )**

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն՝

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|
| Չափաբաժին 1 | | | | | |
| 1 | *Մուրադյան Շին ՍՊԸ* | 850 097 | 170 019 | 1 020 116 | 1 555 100 |
| 2 | *Մանուկյան Շին ՍՊԸ* | 1 183 731 | - | 1 183 731 | |
| 3 | *Դողսե ՍՊԸ* | 1 046 625 | - | 1 046 625 | |
| 4 | *Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ* | 955 125 | 191 025 | 1 146 150 | |
| 5 | *Լիլիթ-92 ՍՊԸ* | 1 200 000 | - | 1 200 000 | |
| Չափաբաժին 2 | | | | | |
| 1 | *Մուրադյան Շին ՍՊԸ* | 5 509 114 | 1 101 822 | 6 610 936 | 7 726 470 |
| 2 | *Մանուկյան Շին ՍՊԸ* | 5 966 126 | - | 5 966 126 | |
| 3 | *Դողսե ՍՊԸ* | 5 199 940 | - | 5 199 940 | |

ProTender©
www.protender.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | *Էներգո Սվյազ Պրոմ Սփրոյ ՍՊԸ* | 5 058 333 | 1 011 667 | 6 070 000 | |
| 5 | *Լիլիթ-92 ՍՊԸ* | 6 900 000 | - | 6 900 000 | |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**4.Հայտերի մերժման մասին**
**(Ա. Հարությունյան )**

Սույն ընթացակարգի հրավերի 8.2-ի կետի համաձայն գնահատող հանձնժողովը որոշեց մերժել Մուրադյան Շին ՍՊԸ-ի 1 չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**5. Անհամապատասխանությունների շտկման մասին**
**(Ա. Հարությունյան )**

Հանձնաժողովը որոշեց ***Մուրադյան Շին ՍՊԸ-ին, Մանուկյան Շին ՍՊԸ-ին, Դողսե ՍՊԸ-ին և Էներգո Սվյազ Պրոմ Սփրոյ ՍՊԸ-ին,*** ծանուցել անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով այն շտկել 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.07.2020թ-ը համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41 կետի:

Իսկ ***Լիլիթ-92 ՍՊԸ-ին*** ծանուցել ներկայացնել հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվը և լիցենզիան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Ա. Հարությունյան )**

Գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել անհամապատասխանությունների շտկման օրը՝ 14.07.2020թ ժամը 12:00-ին, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Սամվել Վարդանյան 2 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Հարությունյան

Անդամներ՝ Վ. Բաղյան

Մ. Ղարիբյան

Քարտուղար՝ Է.Գրիգորյան

ProTender©
www.protender.am